

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Նորապատ
համայնքի ղեկավարի 2018թվականի ընթացքում կատարած
աշխատանքների մասին:

Հաշվետու ժողովը տեղի է ունեցել 2018 թվականի հունվարի
29 -ին ժամը 13.00-ին համայնքապետարանում:

Ժողովին մասնակցում էին ավագանու անդամներ, համայնքապետա-
րանի աշխատակազմը ,մանկապարտեզի կոլեկտիվի
անդամներ, համայնքի բնակիչներ և Արմավիրի

մարզպետարանի ներկայացուցիչ `Գ.Սուքիասյանը: Զեկուցումով
հանդես եկավ համայնքի ղեկավար `Վ.Խաչատրյանը, որն իր
աշխատանքները կազմակերպում է իրեն սահմանված
լիազորությունների շրջանակներում:

2018թվականի ընթացքում հրավիրվել է ավագանու 11 նիստեր, որոնցում
քննարկվել են համայնքին վերաբերվող մի շարք հարցեր և դրանց
վերաբերյալ ընդունվել համապատասխան որոշումներ: Ընդունված
որոշումների կատարման մասին իրազեկվել է համայնքի
ազգաբնակչությանը: Անցած տարվա ընթացքում համայնքի ղեկավարին
տարբեր հարցերով դիմել են շուրջ 23 քաղաքացիներ, որոնց
պահանջներին տրվել են համապատասխան լուծումներ:
517 քաղաքացիների տրվել է տարբեր բնույթի տեղեկանքներ:

Գյուղատնտեսության բնագավառ

2018 թվականի ընթացքում առանձնակի ուշադրություն է դարձվել գյուղատնտեսական աշխատանքների կազմակերպման, բարձր բերքի ապահովման ուղղությամբ: Պետական աջակցության ծրագրերի շրջանակներում համայնքի հողագործներին վաճառված 1333.0 հազար դրամի պարատանյութը, իրան հանդիսացավ արտադրվող մթերքների ինքնարժեքի իջեցման, ստացվող շահույթի ավելացման համար: Ժամանակին է կազմակերպվել ջրատարների վերանորոգումը, դաշտամիջյան ճանապարհների բարեկարգումը: 2018թ. Հուլիսի 10-ի կարկտահարությունը որոշակի ազդեցություն ունեցավ հողօգտագործողների սպասվելիք եկամուտների վրա:

Կենցաղ սպասարկման բնագավառ

Բնակչության կենցաղային հարցերը եղել և մնում են համայնքի ղեկավարի ամենօրյա ուշադրության կենտրոնում: Համայնքի տարածքում կատարվում է անվճար աղբահանություն ,որի համար 2018թվականի ընթացքում ծախսվել է 990.0 հազար դրամ գումար: Աշխատանքներ են տարվում համայնքի նորաստեղծ թաղամասերում ավարտին հասցնելու էլ.էներգիայի մատակարար- րումը: Աշխատանքներ են տարվում նաև գազաֆիկացման ուղղությամբ : Ձեռնարկված միջոցառումների շնորհիվ ջրի մատակարարումը համայնքում դարձել է 24 ժամյա: Համայնքի 11

փողոցում հիմնովի կառուցվելու է կոյուղի: Համայնքի բոլոր փողոցներում անցկացվելու է նոր սերնդի լեղ լուսատուներ:

Մշակույթ և սպորտի բնագավառ

Համայնքապետարանը կուլտուրայի տան և դպրոցի կոլեկտիվի հետ համատեղ կազմակերպում է մի շարք միջոցառումներ՝ տրամադրելով նաև որոշակի դրամական օգնություն: Համայնքապետարանը իր մշտական աջակցությունն է ցուցաբերում մանկապարտեզում, դպրոցում կազմակերպվելիք միջոցառումներին:

Սոցիալական բնագավառ

Համայնքապետարանը իր ամենօրյա ուշադրության կենտրոնում է պահում սոցիալապես անապահով ընտանիքներին օգնություն ցուցաբերելու, նրանց դիմումներին ընթացք տալու գործընթացին: 2018 թվականի ընթացքում 47 ընտանիքների տրամադրվել է 2350,0 հազար դրամական օգնություն: 17 ընտանիքներ ընդգրկված են նպաստառուների ցուցակում, երեք զինծառայող ազատվել է ավտոմեքենայի գույքահարկից: Սոցիալապես անապահով ընտանիքների 7 երեխաներ համայնքապետարանի աջակցությամբ ուղարկվել են առողջարար հանգստի :

Պաշտպանության կազմակերպման բնագավառ

Ընթացիք տարում պաշտպանության կազմակերպման բնագավառում իրականացվել են մի շարք միջոցառումներ: Սահմանված կարգով համայնքապետարանը համագործակցել է տարածքային զինկոմիսարիատի հետ, նպաստել զորակոչին:

Համայնքի զինապարտների գրանցամատյանում կատարվել է լրացումներ; Համայնքապետարանը աջակցել է համայնքի երիտասարդությանը ռազմահայրենասիրական դաստիարակության ուղղությամբ: 2018թվականի ընթացքում համայնքից ՀՀ բանակ են զորակոչվելու ութ երիտասարդներ:

Համայնքային բյուջեյի իրագործում

Բյուջեյի կատարման գործընթացը մշտապես եղել է համայնքի ղեկավարի առաջնահերթ ուշադրության կենտրոնում:

2018թվականի ընթացքում հավաքագրվել է հողի հարկ՝ 7011,0

հազար դրամ, գույքահարկ՝ 10212,4 հազար դրամ:

Աշխատակիցները սահմանված կարգով օգտվում են իրենց սահմանված արձակուրդներից:

Համայնքի հիմնախնդիրները

1. Ոռոգման ջրի ինքնահոս մատակարարում

2. Մշակույթի տան շենքի նորոգում

3. Զբոսայգու բարեկարգում

4. Նոր թաղամասերում գազամատակարարման և ջրամատակարարման անցկացում:

Նորապատ համայնքի ազգաբնակչությունը համայնքապետ՝

Վ.Խաչատրյանի գլխավորությամբ իրենց խորին շնորհակալությունն

են հայտնում մարզպետ պարոն Հ. Մաթևոսյանին համայնքի

կողմից բարձրացված խնդիրներին լուծում տալու համար և լի են

վճռականությամբ համայնքի առջև ծառայած խնդիրները կյանքի

կոչելու ուղղությամբ:

Նորապատ համայնքի ղեկավար՝

Վ.Խաչատրյան